

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՊՄԻ-ի ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի 2015թ. փետրվարի 27-ի խորհրդի թիվ 11 նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների հաստատումն ըստ դասախոսների:
2. Ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերի և հարցատոմսերի հաստատում:
3. Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփումն ըստ առաջադիմությունների /առաջադիմող, փորձաշրջանում գտնվող, հեռացման ենթակա/:
4. Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի կիսամյակային հաշվետվություն:
5. Մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպման և գնահատման կարգի քննարկում:

Լսեցին՝

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաները ըստ դասախոսների հաստատման հարցի մասին:

Հաղորդեց՝ Բ.Սերոբյանը:

Արտահայտվեցին՝ Ա.Խաչատրյանը, Գ.Հովհաննիսյանը, Ա.Մաթևոսյանը, Ա.Մարտիրոսյանը:

Որեշեցին՝ Հաստատել ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից ներկայացված կուրսային աշխատանքների թեմաները ըստ դասախոսների:

Լսեցին՝

2. Ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերի և հարցատոմսերի հաստատման հարցի մասին:

Հաղորդեց՝ Բ.Սերոբյանը, Կ.Հովհաննիսյանը:

Արտահայտվեցին՝ Ա.Խաչատրյանը, Ա.Մաթևոսյանը, Ա.Մարտիրոսյանը, Գ. Հովհաննիսյանը:

Որեշեցին՝ Հաստատել և ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերը և հարցատոմսերը:

Լսեցին՝

3. Առաջին կիսամյակի արդյունքները ըստ առաջադիմությունների ամփոփման հարցի մասին/առաջադիմող, փորձաշրջանում գտնվող, հեռացման ենթակա/:

Հաղորդեց՝ Ա.Խաչատրյանը:

Արտահայտվեցին՝ Ա.Մաթևոսյանը, Գ.Հովհաննիսյանը, Ե.Տոնոյանը, Բ.Սերոբյանը:

Որեշեցին՝ Ֆակուլտետում առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերլուծության արդյունքում նկատվել է առաջադիմության համեմատական նվազում, իսկ կրեդիտ պարտք ունեցող և հեռացվող ուսանողների թիվը անցած ուսումնական տարվա հետ համեմատ նույնպես նվազել են՝ կրեդիտ պարտք ունեցող չկա, հեռացվող 3 ուսանող:

Լսեցին՝

4. Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի կիսամյակային հաշվետվության մասին հարցը:

Հաղորդեց՝ Ա.Խաչատրյանը:

Արտահայտվեցին՝ Ա.Մաթևոսյանը, Բ.Սերոբյանը:

Որեշեցին՝ ֆակուլտետի որակի ապահովման պատասխանատու Գ.Աղանյանը ֆակուլտետի խորհրդի նիստին հարգելի բացակայելու պատճառով, հարցը տեղափոխել ավելի ուշ:

Լսեցին՝

5. Մնացորդային գիտելիքների ստուգման կազմակերպման և գնահատման կարգի քննարկում:

Հաղորդեց՝ Ա.Խաչատրյանը:

Արտահայտվեցին՝ Ա.Մաթևոսյանը, Ա.Խաչատրյանը Բ.Սերոբյանը, Կ.Հովհաննիսյանը:

Որեշեցին՝ Ինստիտուտի գիտական խորհրդին ներկայացնել հետևյալ առաջարկները՝

1. 3.2.2 կետից հանել /առնվազն 40 միավոր/ պահանջը:
2. Հստակ հիմնավորել թե որ դեպքերում պետք է անցկացվի մնացորդային գիտելիքների ստուգումը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

քարտուղար՝

դոցենտ Ա.Խաչատրյան

Վ.Գրիգորյան